ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԲՈԼՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

### «ՑԱՎՈՔ, ԱՌԱՆՁԻՆ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ ԱՆՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵՑ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ»

Խորհրդարանի գործունեության հանրագումարային իր խոսքում, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն անդրադարձավ վերջին ամիսներին Միացյալ Նահանգների օրենսդիրների եւ եվրախորհրդարանների կողմից Վրաստանի իշխանություններին հասցեագրված նամակներին եւ հայտարարություններին: Նրա խոսքով, նամակներն ու հայտարարություններն իրենք ընդունել են որպես բարեկամական դիտողություններ եւ գտնում են, որ գործընկերների հետ անհրաժեշտ է վարել անմիջական եւ անկեղծ խոսակցություն:

- Հարկ է նրանց ներկայացնել մեր փաստարկները եւ իրականացվելիք քայլերը, որպեսզի բոլոր հարցականները վերացվեն,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն եւ հավելեց՝ եվրոպական կուրսի հավատարմության լավագույն ապացույցը առաջիկա խորհրդարանական ընտրությունների արդարացի եւ թափանցիկ միջավայրում անցկացումն է, Վրաստանի հավատարմությունը միջազգային պարտավորություններին: Արչիլ Թալակվաձեի խոսքով, անցյալ



տարվա նոյեմբերից հետո, երբ կառավարող թիմի մի շարք ներկայացուցիչներ հեռացան թիմից, որոշակի անհարթություններ ստեղծվեցին գործընկերների հետ փոխհարաբերություններում:

- Ցանկանում եմ մեր բարեկամներին հավաստիացնել, որ ընտրությունները կանցկացվեն արդարացի եւ թափանցիկ, Վրաստանը կկատարի ստանձնած միջազգային պարտավորությունները, եւ դա այդպես կլինի,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

### ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՐԵՆ Է ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

Փետրվարի 18-ին, խորհրդարանի լիագումար նիստում, օրենսդիր մարմնի ղեկավար Արչիլ Թալակվաձեն տարեկան հաշվետվությունը ներկայացնելիս, մասնավորապես կանգ առավ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլու գործունեության վրա: Նրա խոսքով, Բիձինա Իվանիշվիլին, որպես կառավարող կուսակցության նախագահ, օրինականորեն է մասնակցում քաղաքական գործընթացներին:

Նրա խոսքով, ընդդիմության մի մասը Բիձինա Իվանիշվիլու դեմ սկսել է ապատեղեկատվական քարոզարշավ:

- Բիձինա Իվանիշվիլին որպես 2012 թվականի դժվարագույն ընտրություններ հաղթող կուսակցության ղեկավար, ապա՝ երկրի վարչապետ, իսկ հիմա կառավարող քաղաքական կուսակցության նախագահ, լրիվությամբ օրինականորեն մասնակցում է քաղաքական գործընթացներին: Նա անձնական ռեսուրսները, ֆինանսները եւ ջանքերը օգտագործում է երկրի զարգացման համար, հանրակրթական, մշակութային եւ ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորման եւ աննախադեպ բարեգործության համար, ինչը նրա ընտանիքը շուրջ 20 տարի է, ինչ անկախ քաղաքական գործընթացներից իրականացնում է,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն եւ հավելեց՝ Բիձինա Իվանիշվիլու ղեկավարությամբ «Վրացական երազանքը» կարողացավ Վրաստանում ապահովել խաղաղությունը: Նրա խոսքով, կառավարող թիմը կշարունակի իրականացնել բարեփոխումները եւ ներկայումս այն ունի մշակված, հստակ ծրագիր:

- Մենք կշարունակենք բարեփոխումները եւ, ինչ խոսք, ունենք ապագային կողմնորոշված ծրագիր,- հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն:

*Պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵՆ*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ. «ՄԻ ՔԻՉ ԷԼ ՀԱՄԲԵՐԻՐ, ՍԻՐԵԼԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ...»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

***- Անցած տարին հարուստ էր նաեւ հյուրախաղերով, ընդհուպ Ֆինլանդիա հասաք...***

- Այո, իսկապես: Ֆինլանդիայի Տամպերե քաղաքում ներկայանալը եւ ընդհանրապես մասնակցությունը թատերական այդ խոշոր ու հեղինակավոր փառատոնին, որ տասնյակ տարիների պատմություն ունի, շատ կարեւոր էր: Դերասանի աշխարհընկալումը մեծ նշանակություն ունի նրա մասնագիտական աճի համար: Այս տարի մեր փառատոնային մասնակցությունը սկսվում է Հայաստանի Թատերական գործիչների միության «Արտավազդ» ամենամյա թատերական փառատոնին մասնակցությամբ՝ Արմենուհի Սիսյանի «Ագռավն ասաց» պիեսի բեմելով: Ապա հաջորդելու են Վրաստանում, Օզուրգեթիի թատերական փառատոնն ու մյուսները: Հյուրախաղային ծրագիրը նույնպես հարուստ է ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս:

***- Մեր գեղեցկուհին օրըստօրե ձեւավորվում ու աչք է շոյում, ինչպիսի՞ն է լինելու թատրոնի նոր շենքը:***

- Անզեն աչքով էլ երեւում է, որ շատ ու շատ սիրուն՝ ներս ու դրսից: Մենք շատ շնորհակալ ենք Բիձինա Իվանիշվիլուն, իիրավի այս մեծ գործի համար: Թատրոնը կունենա մեծ ու փոքր դահլիճներ, նաեւ փորձասենյակ, հյուրասրահ եւ տասներկու օթյակ: Ի դեպ, մինչեւ անցած դարի 60-ականները թատրոնն ունեցել է օթյակներ: Նոր թատրոնը կունենա նաեւ ժամանակակից լուսավորում, հագեցած կլինի նոր տեխնիկայով, սարքավորումներով...

***- Սպասվու՞մ է, արդյոք թատերախմբի անդամների համալրում...***

- Մեր մեծերի հին սերունդը, ով տեսավ վերակառուցման փակվող շենքը, ցավոք այսօր ֆիզիկապես մեզ հետ չէ... Բայց սերնդափոխությունը կյանքի օրինաչափությունն է: Մանավանդ, որ շատ տաղանդավոր երիտասարդ դերասաններ ունենք, ում պատմական ժամանակաշրջանում գործելու հնարավորություն է տրվում, եւ դա առավել է կրկնապատկում պատասխանատվությունը: Մենք ստացել ենք նաեւ իրենց հարազատ թատրոնում նորից աշխատելու, այսօր Հայաստանում գործող ադամյանցիներ Աիդա Բաբաջանյանի, Վեներա Թարզյանի, Ալբերտ Սաֆարյանի, Գիորգի Հովակիմյանի, Գագիկ Ադիլխանյանի, մյուսների բանավոր ու գրավոր դիմումները, որոնք ցանկություն են հայտնել ժամանակ առ ժամանակ Թբիլիսի ժամանել ու խաղալ մեր ու իրենց թատրոնում: Նախատեսվում է նաեւ իրենց մասնակցությամբ Երեւանում հատուկ ներկայացում բեմադրել եւ ընդգրկել ադամյանական թատրոնի խաղացանկ: Եվս մի նորություն մեր թատերասերի համար՝ այսուհետ թատրոնի գլխավոր նկարիչն է Թբիլիսիի նախկին թիվ 110 դպրոցի շրջանավարտ, այսօր Հայաստանում եւ աշխարհում մեծ ճանաչում վայելող Մայիս Մխիթարյանը, ու ձեւավորմամբ արդեն բեմադրել ենք «Աշնանային իրիկնամուտը» (հեղ. եւ բմդ.՝ Ա.Բայանդուրյան- *Գ.Բ.*):

***- Իսկ ո՞րն է լինելու նոր շենքի առաջին ներկայացումը:***

- Մասամբ գաղտնիք պահեմ, քանի որ պատմական իրադարձության առաջ ենք կանգնած: Ասեմ միայն, որ մեծ շուքով ներկայացնելու ենք Գաբրիել Սունդուկյանի «Պեպոն» եւ այդ առաքելության համար Հայաստանից հրավիրել ենք անվանի ռեժիսոր Վահե Շահվերդյանին: Խորհրդանշական է, որովհետեւ մեր թատրոնի առաջին ներկայացումը հենց «Պեպոն» է եղել, որ մարմնավորել են հայ բեմի հանճարներ Իսահակ Ալիխանյանը, Արտեմ Լուսինյանը, Բաբկեն Ներսիսյանը, Դորի Ամիրբեկյանը...

***- Ի՞նչ կասեիք հանդիսատեսի մասին:***

- Գիտե՞ք, վերջին տարիներին խաղալով այլ բեմերում մենք միշտ հանդիսատեսի պակաս ենք ունեցել: Հիմա հույս ունենք, որ գալու են, ու գալու են նորերը նաեւ՝ նոր ճաշակ ու պահանջներով: Թատրոնում, ինչպես եւ ամենուր առաջարկ-պահանջարկի հայտնի տեսությունն է գործում: Ինձ զարմացնում է, որ օրինակ Քվեմո Քարթլիի հայկական գյուղերից մեզ անընդհատ զանգում են, կանչում ու նույնիսկ հանդիմանում, որ հաճախ չենք գալիս, իսկ Սամցխե-Ջավախեթիից, որ Տերյան ու Ջիվանի է ծնել՝ երբեք: Ու նույնիսկ, թե գնում ենք, ապա դատարկ դահլիճն է մեզ ընդունում ու ճանապարհում: Թե կա ասելիք, թող խոսվի, բայց անտարբերությունն ուղղակի կործանարար է մշակույթի համար:

- Մեզ համար շատ կարեւոր է, որ մեր հանդիսատեսը կարողանա տարբերել լավ գրականությունը, լավ բեմադրությունից: Իսկապես ցավում եմ, որ մենք հեռանում ենք մեր մշակույթից: Մեզ պակասում են մտավորականներ, երբեմնի հզոր վիրահայ մշակույթը կերտողներ, ու պատճառներից մեկը ոչ միայն անզգացմունք աշխարհն է, այլեւ՝ մայրենիին չտիրապետելն ու մշակույթից հեռու լինելը: Չենք գալիս թատրոն, չենք կարդում թերթ ու չենք մասնակցում պատարագների: Իսկ հետո մեղադրում պետությանը «մեր աստիճանական ձուլման» մեջ: Ո'չ, սիրելիներս: Մեր անտարբերությունն է ամենի մեղավորը ու նաեւ պատասխանատվության կորուստը:

- Մերն իմանալով, պարտադիր պետք է իմանանք նաեւ պետական վրաց լեզուն, մշակույթն ու պատմությունը: Ի դեպ, իմ մեծ ցանկությունն է, որ վիրահայոց թատրոնի հանդիսատեսը դառնա նաեւ վրացին, քանի որ նախատեսում ենք համաժամանակյա թարգմանություն իրականացնել, նաեւ անգլիախոս զբոսաշրջիկը, քանի որ ներմուծելու ենք անգլերենը եւս: Որքան տարբեր լինեն մեր հանդիսատեսն ու ծափերը, այնքան աճ ու առաջընթաց կունենանք:

- Եվ ի վերջո, թատրոն գալը միայն առաջին կամ մի օրով չի սահմանափակվում: Եկանք, տեսանք, գնացինք... շարունակություն է հարկավոր, դիտում, քննարկում, գովաբանում, քննադատում:

***- Թատրոնի շենքն իր ավարտուն տեսքը դեռ չի ընդունել, բայց անընդհատ կիզակետում է: Քաղաքի հյուրերը մեծ հետաքրքրությամբ ու սիրով են գալիս շինհրապարակ...***

- Այո իսկապես, եւ մենք շնորհակալ ենք այդ ուշադրության համար, որն ինչ խոսք մեծ լիցք է հաղորդում ու թատրոնի բարեկամների թիմ ձեւավորում: Այս առումով մենք երախտապարտ ենք «Վրաստան» թերթին, ցուցաբերած աննախադեպ ուշադրության համար: Կուզեի, որ նորակառույց շենքը ծառայեր ոչ միայն ներկայացումներին, այլեւ ներ ու արտիամայնքային հանդիպումներին՝ բարեկամական շփումներին ու քննարկումներին, բաց դռների, գրականությանն ու արվեստին նվիրված օրերին ու միջոցառումներին... ի դեպ, 100-ամյա «Վրաստան» թերթի հոբելյանական հանդիսությանը նաեւ:

***- Դե' ինչ, պարոն Բայանդուրյան, շնորհավոր թատերաշրջանի բացում, մեծ ուրախությամբ ու լիահույս եմ վերջին անգամ մաղթեմ, որ հաջորդը քննարկելիս հանդիպենք նոր շենքում:***

- Շնորհակալ եմ, ԱՄԵՆ...

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

# ԳԻՈՐԳԻ ՇԵՆԳԵԼԱԻԱ

Փետրվարի 17-ին, կյանքի 82-րդ տարում կյանքից հեռացավ Վրաստանի ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Գիորգի Շենգելաիան:

Գիորգի Շենգելաիան ծնվել է 1937 թվականին, Մոսկվայում, ռեժիսոր Նիկոլայ Շենգելաիայի եւ դերասանուհի Նատո Վաչնաձեի ընտանիքում: Ընտանիքի երկու արու զավակներից ավագն էր, կրտսերը՝ կինոռեժիսոր Էլդար Շենգելաիան էր:

Ավարտել է Մոսկվայի Ս.Գերասիմովի անվան կինեմատոգրաֆիայի համառուսաստանյան պետական համալսարանի ռեժիսորական ֆակուլտետը (Ալեքսանդր Դովժենկոյի ու Միխայիլ Ճիաուրելու արվեստանոց):

1961 թվականից որպես ռեժիսոր աշխատել է «Վրացֆիլմ» կինոստուդիայում: Ռեժիսորական արվեստանոց էր վարում Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան կինոյի ու թատրոնի ինստիտուտում: 1986 թվականին դարձել է Բեռլինի կինոփառատոնի մրցանակակիր «Ռեժիսոր» անվանակարգում: 1985 թվականին Գիորգի Շենգելաիային շնորհվել է Վրացական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում: 1991-1992 թվականներին եղել է Վրաստանի Պետխորհրդի անդամ: 2001 թվականի մարտին Գիորգի Շենգելաիան հիմնադրել է «Վրացական վազի կուսակցություն՝ Ռուսաստանի հետ միասին» քաղաքական կազմակերպությունը եւ ղեկավարել այն:

Նրա նկարահանած հայտնի ֆիլմերից են՝ «Ալավերդոբա», «Փիրոսմանի», «Վերայի թաղամասի մեղեդիները», «Բոլորը սեր են ցանկանում», «Խարեբան ու Գոգիան» եւ ուրիշներ:

Գիորգի Շենգելաիան ամուսնացած է եղել դերասանուհի Սոփիկո Ճիաուրելու (1937-2008) հետ: Նրանց երկու որդիներն են Նիկոն՝ նկարիչ եւ Սանդրոն՝ դերասան:



*«Վրաստան» թերթի խմբագրությունը իր վշտակցությունն է հայտնում Վրաստանի ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Գիորգի Շենգելաիայի մահվան կապակցությամբ եւ ցավակցում՝ նրա ընտանիքին, հարազատներին ու բարեկամներին:*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❁ ԱՅԼԱԶԱՆ ❁ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ՝ ՔԱՂՑԿԵՂԻ ՊԱՏՃԱՌ



*Այն, որ քաղցկեղը շարունակ գտնվում է մահացության պատճառների «առաջատար դիրքերում», ցավալի փաստ է: Զարմանալի է, որ գիտության ներկայիս բարձր մակարդակի պայմաններում էլ այդ չարաբաստիկ հիվանդության առաջացման պատճառը հայտնի չէ: Հետաքրքիր է՝ գիտական վերջին բացահայտումները այդ ուղղությամբ ինչ-որ փեղաշարժի բերե՞լ են:*

*Վ.Մարգարյան*

*Բոլնիսի*

Ցավոք, իրավացի եք, քաղցկեղի ծագման պատճառները դեռեւս անորոշ են, թեեւ գիտնականների որոշակի խմբի հավաստմամբ, քրոնիկական բորբոքումը չարորակ ուռուցքների զարգացման հիմնական պատճառներից մեկն է: Նման եզրակացության են հանգել Շաղլոտայում ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինայի համալսարանի գիտնականները:

Պարզվել է, որ տասը դեպքից երկուսում ուռուցքաբանական հիվանդության առաջացումը կապված է վարակների, վիրուսների կամ մանրէների հետ: Հիվանդության է հանգեցնում մանրէների եւ MUC1 գլիկոպրոտեինի փոխազդեցությունը:

Հետազոտողների կարծիքով, քրոնիկական բորբոքման դեպքում գլիկոպրոտեինը կարող է ախտածին գործընթացների առաջացման պատճառ դառնալ: Ըստ որում, փորձագետները ընդգծել են MUC1-ի պաշտպանական գործառույթը, որը միշտ չէ, որ վտանգավոր բջջի է վերածվում: Այսպես որոշ հիվանդների մոտ գլիկոպրոտեինը շարունակում է հակաբորբոքիչ գործառույթ կատարել:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԸ ԼՈՆԴՈՆՆ Է



*Լսել եմ, որ հատուկ ուսումնասիրություն է փարվել աշխարհում ապրելու համար լավագույն քաղաքն անվանելու նպատակով: Հետաքրքիր է իմանալ՝ ինչո՞վ ավարտվեց այդ ուսումնասիրությունը:*

*Լ.Սիմոնյան*

*Ախալքալաքի*

Այո, նման ուսումնասիրություն անց է կացվել: «Աշխարհի լավագույն քաղաքներ-2020» վարկանիշը կազմել է Resonance Consultancy-ի փորձագետների կողմից:

Համապատասխան հետազոտության շրջանակում՝ վերլուծաբանները 1 միլիոնից ավելի բնակչությամբ քաղաքները գնահատել են մի շարք պարամետրերով, որոնց թվում եղել են՝ կլիման, անվտանգության մակարդակը, հանգստի համար ենթակառուցվածքների առկայությունն ու տեսարժան վայրերը, կրթական հաստատություններով, օդանավակայաններով, ռեստորաններով եւ խանութներով ապահովվածությունը, կրթված բնակիչների բաժինը, քաղաքացիների եկամուտների մակարդակը, քաղաքի հանրաճանաչությունը սոցիալական ցանցերում:

Հետազոտության տվյալներով, կյանքի համար աշխարհի լավագույն մեգապոլիսների վարկանիշը գլխավորել է Լոնդոնը, որին հաջորդում են Նյու Յորքը, Փարիզը եւ Տոկիոն: Մոսկվան զբաղեցրել է ցուցակի հինգերորդ հորիզոնականը:

Վարկանիշի թոփ-10-ում նաեւ հայտնվել են (վարկանիշում դիրքերի նվազման կարգով) Դուբայը, Սինգապուրը, Բարսելոնան, Լոս Անջելեսը եւ Հռոմը:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ՄՈԼՈՐԱԿԻ ԱՆՄԱՀ ԲՆԱԿԻՉԸ

*Գիտնականները պարզել են, որ մեր մոլորակում նաեւ անմահ էակներ են ապրում՝ Նուտրիկուլա անունը կրող մեդուզաները: Այս մեդուզան գմբեթի ձեւ ունի, շատ փոքր է, ամենամեծը՝ 5 մմ տրամագծով: Հայրենիքը Կարիբյան ավազանն է:*

Մինչ 90-ական թվականները այս էակն ուսումնասիրված չէր գիտնականների կողմից: Սակայն ոչ վաղ անցյալում իտալացի գիտնական Ֆերնանդո Բոերոն, իր հերթական ուսումնասիրության ժամանակ, միանգամայն պատահաբար պարզեց, որ Նուտրիկուլան անմահ է: Գիտնականը մոռացության էր մատնել այս մեդուզաների ակվարիումը, որի ջուրը լրիվ չորացել էր: Բոերոն եզրակացրեց, որ մեդուզաներն այլեւս ողջ չեն լինի: Երբ պատրաստվում էր չորացած մեդուզաների մնացուկները հետազոտել, հանկարծ նկատեց, որ դրանք դեռ են նետել իրենց շոշափուկները եւ կրկին վերածվել թրթուրների: Գիտնականը թրթուրներով ակվարիումի մեջ կրկին ջուր լցրեց: Որոշ ժամանակ անց՝ իսկական հրաշք տեղի ունեցավ. սնված թրթուրները վերածվեցին պոլիպների, որոնցից էլ նոր մեդուզաներ առաջացան: Նուտրիկուլան կարողանում է «ծերությունից» դեպի «մանկություն» վերադառնալ: Այն իր մահով չի մեռնում եւ ոչնչանում է միայն ձկներին կեր դառնալով:

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՇԽԱՐՀ

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ՄԱՍԵՐԻՑ

*Դժվար է այսօր պատկերացնել որեւէ հարսնացուի՝ առանց հարսանեկան ճերմակ զգեստի: Չնայած օր-օրի զարգացող նորաձեւությանը, այնուամենայնիվ, մեզանում պահպանվել է հարսնացուի ճերմակ զգեստ հասկացությունը: Սակայն քչերը գիտեն, որ հինում կանայք ամուսնանում էին տարբեր գույնի զգեստներով այնքան ժամանակ, քանի դեռ Անգլիայի Վիկտորյա թագուհին, բոլորից տարբերվելու համար, իր սեփական հարսանիքին ներկայացավ ճերմակ հարսանյաց զգեստով՝ այդպիսով հիմք դնելով այս ավանդույթին: Աշխարհի տարբեր մասերում գոյություն ունեն հարսանեկան ուրույն ավանդույթներ, որոնցից յուրաքանչյուրն ունեն իրենց դերն ու նշանակությունը տվյալ ազգի համար: Այդ ծեսերից շատերը մեզ կարող են թվալ տարօրինակ, երբեմն էլ նույնիսկ զարմանալի: Առաջարկում ենք ճանապարհորդություն կատարել աշխարհով մեկ՝ տեսնելու, թե տարբեր երկրներ՝ ինչպես են տոնում հարսանիքները:*

**Գերմանիա**

Գերմանիայում հաջողություն է համարվում, երբ հարսանիքի նախօրեին կոտրում են սպասքը: Դրա համար հարսնացուի տան մոտ հավաքված հյուրերը սկսում են կոտրել նոր սպասքը, իսկ հարսնացուն մեծ հաճույքով տուն է հրավիրում իրեն բարին ու լավը կամեցողներին:



Ամուսինը՝ ցույց տալու համար, որ շատ է սիրում եւ հոգ է տանում կնոջ մասին, սկսում է մաքրել աստիճանները սպասքի մանր կտորներից:

Եվս մի հետաքրքիր ավանդույթ գերմանական հարսանիքից: Հարսանիքից հետո նորապսակ զույգը պետք է միասնական ուժերով կտրի մեծ գերանից մի հատված: Սա նշանակում է, որ նրանք միասին են անցնում ամուսնական կյանքի առաջին դժվարությունը:

**Շվեդիա**

Շվեդիայում, եթե նորապսակ երիտասարդներից մեկը հեռանում է սեղանից պարելու, կամ լվացվելու համար, ապա այդ պահին նորապսակներից մյուսն իրավունք ունի համբույր ստանալ հյուրերի կողմից:

**Ինդոնեզիա**

Ինդոնեզիայի Տիդոնգ համայնքում, նորապսակները հարսանիքից հետո երեք օր ու երեք գիշեր դուրս չեն գալիս տնից: Նրանք նույնիսկ իրավունք չունեն գնալ բաղնիք: Այս 3 օրերի ընթացքում զույգին հետեւում են մի քանի մարդ, որոնք նորապսակներին տրամադրում են նվազագույն քանակով սնունդ եւ ջուր: Ենթադրվում է, որ տնային կալանքի տակ նման մեղրամիսը նպաստում է երջանիկ ամուսնության եւ առողջ երեխաներ ծնելուն:

**Չինաստան**

Չինաստանում՝ Ներքին Մոնղոլիայի տարածքում, ապրում է Դաուր ժողովուրդը: Ըստ նրանց հավատալիքների՝ հարսանիքի օրը նշանակելիս, ամուսնացող զույգը համատեղ ուժերով պետք է մի ճուտ բռնի եւ սպանի: Այնուհետեւ հանում են ճտի լյարդը, որից հետո միայն նշանակում են հարսանիքի ամսաթիվը:

Չինաստանում կա եւս մեկ ավանդույթ: Զարմանալի չի, որ բոլոր հարսնացուների համար իրենց հարսանիքի օրը զգացմունքային է եւ հուզիչ: Չինաստանում բնակվող Տուցզյա ժողովրդի հարսնացուները սկսում են լաց լինել արարողությունից մեկ ամիս առաջ: Համարվում է, որ հարսանիքից առաջ «կուշտ լաց եղած» աղջիկն իր համար ապահովում է երջանիկ ամուսնություն առանց արցունքների: Նախանձելի հարսնացու դառնալու եւ խաղաղ ընտանեկան կյանք երաշխավորելու համար, այստեղ աղջիկները լաց լինել սովորում են 12 տարեկանից, իսկ որոշ ընտանիքներ նույնիսկ «լացի մասնագետներ» են հրավիրում: Լացին կարող են միանալ նաեւ ընտանիքի իգական սեռի մյուս անդամները:

**Շոտլանդիա**

Հարսանեկան հիմնական արարողությունից՝ եկեղեցում իրենց օրհնությունը ստանալուց անմիջապես հետո, փեսան հանդիսավոր իր կնոջ ուսին դնում է վանդակավոր նախշերով քաշկինակ եւ ամրացնում արծաթյա ամրակներով: Թաշկինակի գույնն ընտրվում է փեսայի ընտանեկան գույնին համապատասխան: Սա նշանակում է, որ փեսան իր ընտանիքը համալրեց նոր անդամով. նրանք դառան ընտանիք: Հարսն էլ այսուհետ հանդես է գալու որպես տվյալ ընտանիքի անդամ: Շատ խորհրդանշական է այս պահը: Հարսի զգեստը դառնում է իր ամուսնու հագուստի գույնի, իհարկե, պահպանելով նաեւ հարսանեկան զգեստի ուրույն տեսքը:

**Հունաստան**

Հունական հարսանիքներն անցնում են ուրախ պարերով: Այստեղ նորապսակները պարում են փողի պար, որի ժամանակ հյուրերը նվիրում են նորապսակներին գումար, կպցնելով այն զույգի հագուստներին:

Պարերի ընթացքում հարսնացուն պետք է փորձի կանգնել փեսայի ոտքերին, իսկ փեսան պետք է լինի այնքան ճկուն եւ ուշադիր, որ թույլ չտա: Սրանով փեսան ցույց է տալիս, որ ավելի ուժեղ է, քան կինը:

ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

## ԼԱՎԱԳՈՒՅՆԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Ինչպես հասնել լավագույն արդյունքի: Հետեւիր ներկայացվող խորհուրդներին, եւ դու կհասնես նպատակիդ:*

- Այսօր ավելին արա, քան՝ երեկ:
- Արա այն, ինչը հաճելի է եւ քեզ համար ոգեշնչման աղբյուր է:
- Գլխավորապես կենտրոնացիր ոչ թե քո առջեւ ծառացած խնդրի, այլ դրա լուծման վրա:
- Ջանք մի խնայիր աշխատանքդ ամենաբարձր մակարդակով անելու, կատարելության հասնելու համար:
- Գովաբանիր մյուսներին, հատկապես այն պահերին, երբ նրանք գովեստի կարիք են զգում:
- Արդարացումներ փնտրելու փոխարեն, համառորեն աշխատիր:
- Սովորիր ընկնելուց հետո շուտ ոտքի կանգնել:
- Կատարիր թե՛ ուրիշներին եւ թե՛ ինքդ քեզ տված խոստումները:
- Մեծահոգություն դրսեւորիր՝ հատկապես դժվար պահերին:
- Միշտ ձգտիր անել սպասվածից ավելին:
- Ամեն օր ժամանակ հատկացրու ֆիզիկական եւ հոգեւոր ուժերի վերականգնման:
- Քո տան հարմարավետությունը դարձրու քո հաջողության հիմքը:
- Մյուսներին նույնպես ոգեշնչիր ավելին լինել, քան երեկ էին:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՅԱՑԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆ-ԱԼԻԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄՅՈՒՆԽԵՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Քննարկմանը Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանը եւ Արցախը պատրաստ են իրական ջանքեր գործադրել՝ տարածաշրջանում հարատեւելի խաղաղություն ձեւավորելու համար: Նրա խոսքով, միջազգային հանրությունը պետք է շատ հստակ շեշտի, որ ԼՂ հակամարտությունը չունի ռազմական լուծում:

- Եթե որեւէ մեկն այլ կերպ է մտածում եւ ասում է, թե կա հակամարտության ռազմական լուծում, ես կարծում եմ՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կպատասխանի, որ այդ պարագայում մենք կարող ենք ասել, որ այս հակամարտությունն արդեն լուծված է: Ես, սակայն, կարծում եմ, որ մեզ անհրաժեշտ է տեւական, հարատեւելի խաղաղություն,- նշեց Փաշինյանը:

Նա նախ անդրադարձավ Ալիեւի պատմական «ակնարկին»՝ շեշտելով, որ այդքան հեռու պետք չէր գնալ:

- Պետք չէր գնալ պատմության գիրկը, քանի որ, երբ հայ թագավոր Տիգրան Մեծը բանակցում էր Պոմպեոսի՝ հռոմեական ռազմական առաջնորդի հետ, չկար որեւէ պետություն Հարավային Կովկասում եւ ընդհանրապես ամբողջ աշխարհում, որը կանվանվեր Ադրբեջան,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով, հենց Կովկասյան բյուրոն է որոշում կայացրել, որ Ղարաբաղը լինի Հայաստանի մաս, դա ամբողջովին օրինական որոշում էր:

- Այդ որոշումից հետո, Ստալինի անձնական նախաձեռնությամբ, որոշումը Մոսկվայում փոխվեց: Դա կարծես դավ էր, համաձայնություն էր Ստալինի, Լենինի եւ Աթաթուրքի միջեւ: Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջան պետության կազմում: Ղարաբաղը դրվել է, մտցվել է Ադրբեջանի կազմի մեջ միայն Խորհրդային Միության ձեւավորման գործընթացում,- հայտարարեց Հայաստանի վարչապետը եւ հավելեց, որ ինչպես Ադրբեջանն է անկախություն ձեռք բերել Խորհրդային Միությունից, այնպես էլ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանից եւ Խորհրդային Միությունից: Փաշինյանը նշեց նաեւ, որ հիմնահարցի կարգավորման բանակցությունների համար նոր գաղափարներ առաջ քաշելու անհրաժեշտություն է տեսնում:

## ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ



*Փետրվարի 18-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի հետ:*

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը:

Հանդիպմանը վարչապետը գոհունակություն հայտնեց Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացման ընթացքից, նշելով, որ երկկողմ փոխգործակցությունը կրում է ինտենսիվ բնույթ:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող հարցեր: Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանը հավատարիմ է հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափում եւ անդրադարձավ բանակցային կարգավորման շուրջ իր դիտարկումներին ու տեսակետներին: Նա կարեւորեց Արցախի քաղաքացիական հասարակության ներգրավումը վստահության կառուցման միջոցառումներում, ինչը կնպաստի կառուցողական մթնոլորտի ձեւավորմանն ու բանակցային գործընթացին:

Հայաստանի վարչապետն ու Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչը մտքեր փոխանակեցին նաեւ տարածաշրջանային նշանակության այլ հարցերի շուրջ:

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Փետրվարի 17-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրավիրել է խորհրդակցություն, որին մասնակցել են Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, Ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնակատար Էդուարդ Մարտիրոսյանը, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Արտակ Դավթյանը, Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, Քննչական կոմիտեի նախագահ Հայկ Գրիգորյանը, Զինված ուժերի եւ իրավապահ մարմինների բարձրաստիճան այլ ներկայացուցիչներ:*

Մանրամասն անդրադարձ է կատարվել վերջին շրջանում Զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերի հանգամանքներին եւ պատճառներին: Պատասխանատուները զեկուցել են հարուցված քրեական գործերի ընթացքի մասին:

Նիկոլ Փաշինյանն առաջնային է համարել ԶՈՒ-ում քրեական ենթամշակույթի եւ կարգապահության հետ կապված առկա խնդիրների լուծումը եւ ընդգծել կարգապահության մակարդակի շեշտակի բարձրացման ուղղությամբ հետեւողական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը՝ պատասխանատուներին տալով համապատասխան հանձնարարականներ: Կայացվեցին մի շարք կարեւոր, այդ թվում՝ կադրային որոշումներ:

## 50 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՏԱՐՎԱ ՏԱՍԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

*Հայաստանի կառավարությունը 50 մլն դրամ հատկացրեց Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը՝ տարվա 10 լավագույն մարզիկներին պարգեւատրելու համար:*

Ինչպես նշեց Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, մրցույթն անցկացվել է նախորդ տարի:

- Մրցույթի հաղթողների համար նախկինում խրախուսման միջոցներ հատկացված չեն եղել: Համատեղ քննարկման արդյունքում որոշում կայացվեց՝ 10 լավագույն մարզիկներից յուրաքանչյուրին խրախուսել 5-ական մլն դրամով: Սա շատ հստակ ուղերձ է պրոֆեսիոնալ սպորտի ոլորտին, հատկապես օլիմպիական տարում, որ պետությունը մեծ ուշադրություն է դարձնում մարզական արդյունքներին: Արդեն որոշել ենք, որ ամեն տարի այս գումարն ունենալու ենք բյուջեում եւ 10 լավագույն մարզիկներին պարգեւատրելու ենք,- ասաց նախարարը՝ ներկայացնելով այդ 10 մարզիկներին:

Բացի այդ, նախարարի խոսքով, Օլիմպիական խաղերում առաջին հորիզոնականը զբաղեցրած մարզիկները պետության կողմից կստանան 20-ական մլն դրամ:

Տարվա լավագույն մարզիկներ են ճանաչվել հունա-հռոմեական ոճի ըմբշամարտիկ Արթուր Ալեքսանյանը, ծանրամարտիկ Ռուբեն Ալեքսանյանը, մարմնամարզիկ Արթուր Ավետիսյանը, բռնցքամարտիկ Հովհաննես Բաչկովը, հունա-հռոմեական ոճի ըմբշամարտիկ Սլավիկ Գասպարյանը, սամբիստ Տիգրան Կիրակոսյանը, ազատ ոճի ըմբշամարտիկ Արսեն Հարությունյանը, ծանրամարտիկներ Սիմոն Մարտիրոսյանը, Գոռ Մինասյանը եւ Հակոբ Մկրտչյանը:

Պարգեւատրումը տեղի ունեցավ փետրվարի 21-ին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԻՆԵՐԻ ՄՐՑԱՐՇԱՎԸ «ProdExpo-2020»-ԻՆ




*Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում փետրվարի 14-ին ավարտվեց «ProdExpo-2020» սննդարդյունաբերության 27-րդ միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցում էր շուրջ 2600 արտադրող 70 երկրից:*

Միջազգային այս խոշորագույն ցուցահանդեսը գործընկերներ ձեռք բերելու, ոլորտի հիմնախնդիրները քննարկելու, նոր շուկաներ գրավելու եւ արտադրանքը սպառողին ներկայացնելու լավագույն հարթակներից մեկն է:

Ցուցահանդեսի ընթացքում կազմակերպվող խմիչքների միջազգային համտեսման մրցույթի ընթացքում, ներկայացուցչական ժյուրին՝ գինեգործներ, էքսպերտներ, սպառողների միությունների ներկայացուցիչներ եւ քննադատներ, ընդունված միջազգային չափանիշների համապատասխան, գնահատել են մրցույթի մասնակից շուրջ 800 ապրանքատեսակ:

Գինիների եւ ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսի շրջանակում արդեն 8-րդ տարին է, ինչ հայկական գինիները իրենց գերազանց համային որակով գրավում են այցելուների ուշադրությունը: «Armenia Wine» ընկերությունը այս տարի նույնպես հյուրընկալվեց ցուցահանդեսին՝ ներկայացնելով իր նրբահամ եւ անզուգական գինիների տեսականին, որն արժանացավ՝ թե' սպառողների, թե' միջազգային խոշոր գործընկերների բարձր գնահատականին:

### ՄԵԿՆԱՐԿԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

*Փետրվարի 17-ից մեկնարկել սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավը: Քարոզարշավը շարունակվելու է մինչեւ ապրիլի 3-ը:*

*Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն արդեն ձեւավորել է «Այո»-ի շտաբը: Ձեւավորվել է նաեւ պատգամավորների կողմից «Ոչ»-ի շտաբը:*

*Հիշեցնենք, որ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն կկայանա ապրիլի 5-ին:*

### ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՍՈՎ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

*Վատիկանում Սուրբ Պետրոսի տաճարի գետնադամբարանում՝ Սուրբ Պետրոսի շիրիմի մոտ, հայկական ծեսով Սուրբ եւ Անմահ պատարագ է մատուցվել ԱՄՆ եւ Կանադայի Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ Միքայել եպիսկոպոս Մուրադյանի կողմից:*

*Փետրվարի 17-ին Մայր Աթոռի պատվիրակությունը, որի կազմում են Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի տեսուչ Տեր Մեսրոպ վարդապետ Պարսամյանը, Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տեր Վահրամ քահանա Մելիքյանը եւ Մայր Աթոռի Կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Տեր Ադամ քահանա Մակարյանը, հանդիպում ունեցավ Հռոմի Ֆրանցիսկոս պապի հետ:*

### ՄԱՀԱՑԵԼ Է ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆԸ



*96 տարեկան հասակում կյանքին հրաժեշտ տվեց Հայաստանի ժողովրդական արտիստ, դերասան եւ ռեժիսոր Երվանդ Մանարյանը:*

*Երվանդ Մանարյանը ծնվել է Իրանի Արաք քաղաքում: 1946 թվականին ներգաղթել է Հայաստան, սովորել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:*

*Որպես դերասան եւ ռեժիսոր՝ աշխատել է Երեւանի Հ.Պարոնյանի եւ Գ.Սունդուկյանի անվան թատրոններում, նկարահանել է վավերագրական եւ գեղարվեստական մի շարք ֆիլմեր, գրել սցենարներ: Մանարյանը նկարահանվել է մի շարք հայտնի ֆիլմերում, ինչպիսիք են՝ «Հարսնացու հյուսիսից», «Քաոս», «Մորգանի խնամին» եւ այլն:*

*Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցավակցական հեռագրեր են հղել անվանի դերասան, ռեժիսոր Երվանդ Մանարյանի ընտանիքին:*

### ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳԵՐՄԱՆ ԱՎԱԳՅԱՆԸ



*57 տարեկանում հանկարծամահ է եղել լուսանկարիչ, վավերագիր Գերման Ավագյանը:*

*Ծնունդով Վրաստանի Իմերեթիի երկրամասի Խոնիի շրջանից, բազում միջազգային ցուցահանդեսների կազմակերպիչ եւ մասնակից Գերման Ավագյանը իր լուսանկարներում անդրադառնում էր սոցիալական հարցերին, մտավոր առողջության խնդիրներին, հանքարդյունաբերության հարցերին, հաշմանդամություն ունեցող անձանց ու աղքատության խնդիրներին:*

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր վշտակցությունն է հայտնել Գերման Ավագյանի ընտանիքին՝ ճանաչված լուսանկարչի վաղաժամ մահվան կապակցությամբ:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՓԵՏՐՎԱՐ

***23.02.2020 Բուն Բարեկենդան***

Մեծ Պահքի բարեկենդանը կոչվում է Բուն Բարեկենդան, քանի որ նախորդում է ամենաերկար պահքին: Այն տեւում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Սուրբ Հարության՝ Զատիկի տոնը:

***24.02.2020 Մեծ Պահք***

Մեծ Պահքի 48 օրերին օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք:

Մեծ Պահքին անմիջապես հաջորդող շաբաթը կոչվում է Ավագ Շաբաթ եւ ընդգրկում է Փրկչի երկրային կյանքի վերջին կարեւորագույն իրողությունները՝ հաղթական մուտքը Երուսաղեմ (Ծաղկազարդ), Վերջին Ընթրիքը, Մատնությունը, Չարչարանքները, Խաչելությունը, Մահը, Թաղումը եւ ի վերջո հրաշափառ Հարությունը՝ Սուրբ Զատիկը:

***29.02.2020 Սուրբ Թեոդորոս զորավարի հիշատակության օր***

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵՆ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՃԱՆԱՉՎԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՆՐՈՐԴ



Վրաց ծանրամարտիկ Լաշա Տալախաձեն, ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից անցկացված հարցման արդյունքում, երրորդ անգամ անընդմեջ ճանաչվեց աշխարհի ուժեղագույն ծանրորդ (17 084 ձայն):

Հիշեցնենք, որ Լաշա Տալախաձեն (+109կգ) իր քաշային կարգում աշխարհի քառակի, Եվրոպայի քառակի եւ օլիմպիական խաղերի չեմպիոն է, աշխարհի բազմակի ռեկորդակիր:

Կանանց միջեւ լավագույնն է ճանաչվել ամերիկուհի Քեթրին Էլիզաբեթը:

### ԸՄԲՇԱՄԱՐՏ. ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԱԿՏԻՎՈՒՄ

Հռոմում Եվրոպայի ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունում վրաց մարզիկներն իրենց ակտիվում գրանցեցին ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ:

Մայրցամաքի առաջնությանը ոսկե մեդալ է նվաճել աշխարհի գործող եւ եռակի չեմպիոն Գենո Պետրիաշվիլին (125կգ), արծաթե մեդալի արժանացավ նույնպես աշխարհի գործող չեմպիոն Բեքա Լոմթաձեն (61կգ), իսկ բրոնզե մեդալը նվաճեցին Ավթանդիլ Կենճաձեն (74կգ) եւ Էլիզբար Օդիկաձեն (97կգ):

Հայաստանի մարզիկներից միայն Արմեն Հարությունյանը (61կգ) արժանացավ բրոնզե մեդալի:

### ԲԱՍԿԵՏԲՈԼ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈԲԱՍԿԵՏԻ ԵԶՐԱՓԱԿԶՈՒՄ

Բասկետբոլի Վրաստանի հավաքականը, ընտրական փուլի շրջանակներում, լրացուցիչ ժամանակամիջոցում՝ 96:88 հաշվով պարտության մատնեց Շվեյցարիայի հավաքականին:

Հիշեցնենք, որ Վրաստանը 2021 թվականի Եվրոբասկետի հյուրընկալող երկրներից է, որի շնորհիվ երկրի հավաքականը արդեն ձեռք է բերել եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք, եւ այս ընտրական փուլը հավաքականի համար կրում է խորհրդանշական բնույթ:

Ավելացնենք, որ Շվեյցարիայից եւ Սերբիայից բացի, Վրաստանի հավաքականի ընտրական ենթախմբում է նաեւ Ֆինլանդիան:

### ՖՈՒՏԲՈԼ. ԴԻՐՔԵՐԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային նոր սանդղակը:

Ըստ նոր դասակարգման՝ Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները պահպանեցին իրենց դիրքերը, համապատասխանաբար, զբաղեցնելով սանդղակի 912 եւ 102-րդ հորիզոնականները:

Վարկանիշային աղյուսակի տասնյակում փոփոխություններ չկան, միմյանց հաջորդում են Բելգիան, Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան, Ուրուգվայը, Խորվաթիան, Պորտուգալիան, Իսպանիան, Արգենտինան եւ Կոլումբիան:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - 151

# ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՄԵԾՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՇԻՐԻՄԻՆ

***Փետրվարի 19-ին՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում կազմակերպվել էր գեղեցիկ միջոցառում:***



Թբիլիսցիները ծաղիկներով զարդարեցին Մեծն բանաստեղծի շիրիմը: Պանթեոն էր այցելել պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող, Հայաստանի Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանը՝ իրեն ուղեկցող պատվիրակության հետ, որի կազմում էր նաեւ ծնունդով թբիլիսցի, Հայաստանի պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրահմովը: Այստեղ էին նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաստանի Զինված ուժերի բրիգադի գեներալ Ալեքսանդրե Կիկնաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը: Մեծ գրողին հավուր պատշաճի իրենց հարգանքի տուրքն էին բերել նաեւ գրողներ, նկարիչներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը հոգեհանգստյան կարգ կատարեց Մեծն բանաստեղծի ու հասարակական գործչի շիրիմին, ներկաներին պատմեց նրա կյանքի ու գործունեության, հայ-վրացական բարեկամության ամրապնդման գործում ունեցած դերի, Մեծ Եղեռնի օրերին հայ որբերին ցուցաբերած օգնության եւ հասարակական այլ կարեւոր ու մնայուն ծառայությունների մասին:

Հիշեցնենք, որ Թումանյանի ծննդյան օրը կոչվում է նաեւ «Գիրք նվիրելու օր», որը Հայաստանում սկիզբ է դրվել Հայաստանի գրողների միության նախագահ, երջանկահիշատակ Լեւոն Անանյանի նախաձեռնությամբ 2008 թվականին, իսկ Թբիլիսիում՝ բանաստեղծ, թարգմանչուհի, լուսահոգի Անահիտ Բոստանջյանի ջանքերով:

Ներկաներին, ավանդույթի համաձայն, նվիրվեցին գրքեր:

Հանճարեղ բանաստեղծի ծննդյան օրվա տոնակատարությունը շարունակվեց Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնում: Թումանյանի տան հյուրընկալ սրահում էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թումանյանի ծոռնուհի Ալյոնա Կոլեսնիկովան, թբիլիսահայ մտավորականներ, արվեստի եւ գրականության երկրպագուներ:

Ամենայն հայոց բանաստեղծի բնակարանը շնչում էր ծննդյան օրվա տրամադրությամբ: «Թումանյանի տուն» կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը ներկաներին ողջունեց, ապա տոնական սեղանի շուրջ հավաքված հյուրերին մատուցվեցին «մագաղաթյա» թերթիկներ՝ թումանյանական «աշխարհից» մեջբերումներով:

Մեծ բանաստեղծի ծննդյան օրվան նվիրված՝ Թբիլիսիի թիվ, թիվ 104 եւ 103 դպրոցների աշակերտների համար, Թբիլիսիի «Վրացահայերի միություն» կազմակերպության (ղեկ.՝ Մարի Առաքելովա) աջակցությամբ, նրանց սեփական հարկի տակ, տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանը նախաձեռնեց եւ ցուցադրեց Հովհ.Թումանյանի հեքիաթների մոտիվներով տիկնիկային ներկայացում:

***ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ***

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը: 9.Ուղեւորություն որոշակի նպատակով: 10.Ծավալի չափման միավոր: 11.Սերբիայի մայրաքաղաքը: 13.Մեքսիկացի ընկեր: 16.Հայ պատմաբան: 17.Քաղաք Ֆրանսիայում: 19.Այն կողմ (արեւմտ.): 22.Չեխիայի մայրաքաղաքը: 24.Ալբերտո Մորավիայի վեպերից: 25.Սնդուկ, տապանակ: 27.Տարրական ուսուցչուհի: 29.Փուլ, էտապ: 32.Ձեռնածու: 33.Ծիլ, բողբոջ: 35.Անհիշաչար, անքեն: 37.Հորեղբայր (բրբ.): 39.Ասպարեզ, մրցասպարեզ: 40.Չհասած, խակամիտ, տգետ: 43.Շեքսպիրյան արքա: 44.Քաղաք Վրաստանում: 47.Կամբոջացի նկարիչ եւ գրող Վաննն ...: 49.Ծարիր: 50.Քաղաք Շվեդիայում: 53.Հայաբնակ գյուղ Վրաստանի Նինոծմինդայի մունիցիպալիտետում: 54.Դ.Վարուժանի բանաստեղծություններից: 55.Մանրաբեկոր, փխրուն ապար: 57.Նմանապես: 58.ԱՄՆ 45-րդ նախագահի անունը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վճարել: 2.Անգլիացի երաժիշտ եւ երգիչ ... Սթար: 3.Խելապակաս: 4.Քաղաք Ճապոնիայում: 5.Հայկական ճաշատեսակ՝ ... քյուֆթա: 6.Եվրամիության երկրների տարադրամը: 8.Կուբացի հեղափոխական եւ նախկին նախագահ՝ ... Կաստրո: 12.Գետ Սիբիրում: 14.Տղա երեխա (արեւմտ.): 15.Կատարածու: 18.Սպասավոր, աղախին: 19.Մայր երակ: 20.Նեղուց Եվրոպական Գալիպոլյան կղզիների եւ Փոքր Ասիայի հյուսիս-արեւմտյան մասի միջեւ: 21.Քարթլիի (Իբերիա) թագուհի: 23.Նահանգ ԱՄՆ-ում: 26.Պռունկ (ժող.): 28.Լիճ Հայաստանում: 29.Վերք: 30.Թատերագրական երկի կամ ներկայացման ամբողջական մաս: 31.Հեգնանք: 34.Դդմազգիներին պատկանող բույս: 36.Անասունների չոր կեր (խոտ, գարի, վարսակ եւ այլն): 38.Օձ, Ռեդյարդ Քիփլինգի «Ջունգլիների գիրքը» ստեղծագործության հերոս: 41.Հին ձեւի: 42.Ցուցատախտակ: 45.Թշնամի: 46.Իսլամական Հանրապետություն: 48.Ամերիկահայ կոմպոզիտոր ... Հովհաննես: 51.Աստծու կողմից ստեղծված առաջին կինը: 52.Լուր, ծանուցում: 56.Վառ կարմիր:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Համբո: 4.Մարսել: 10.Փանոս: 11.Աթոս: 14.Պկու: 16.Բալենի: 17.Եվրոպա: 18.Զավան: 19.Եմ: 20.Ատ: 22.Լիմիտ: 25.Աննման: 27.Իմ: 28.Արդ: 30.Նիհո: 33.Ձեկ: 34.Յուան: 35.Թլոր: 36.Մայն: 37.Ոսկի: 41.Ձեյն: 43.Սահարա: 45.Երուխան: 46.Այ: 47.Կալ: 48.Գրոշ: 49.Նագանո: 51.Ուրբաթ: 53.Մամոնտ: 56.Այլ: 57.Բրամս: 58.Բարկ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Արալյան: 3.Բրոնզ: 4.Մարգար: 5.Ան: 6.Ռոպե: 7.Սսկվել: 8.Լնդախտ: 9.Չուբար: 12.Թե: 13.Սիամանթո: 15.Ուրմիա: 21.Տնանկ: 23.Մրջյուն: 24.Իդեն: 26.Նիլս: 27.Իորի: 29.Լյուքսեմբուրգ: 31.Նոկիա: 32.Ամպեր: 38.Նոնեշվիլի: 39.Մսուր: 40.Սվանեթիա: 41.Ջայլամ: 42.Յանգոն: 44.Հաադա: 47.Կամ: 50.Նոպա: 52.Բիբ: 54.Տակ: 55.Եւ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445